ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

ԱՐՄԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
պատմական գիտ. թեկնածու, ՀԱԻ

ՏԱԹԵՎ ԳՅՈՒՂԻ Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻՆ ԵՎ ՆՐԱ ՎԻՄԱԳՐԵՐԸ

ՀՀ Սյունիքի մարզի Տաթեւ գյուղում եւ շրջակայքում մեծաթիվ են միջնադարյան հուշարձանները, որոնցից են համանուն վանքն իր պարսպակից շինություններով ու ձիթհանով, Որոտանի կիրճում գտնվող Մեծ անապատը, ներկայումս խոնարհված Տումբալանց[1] Ս. Աստվածածին եկեղեցին, կամուրջը, գյուղամիջյան քարավանատունը, Ս. Մինաս եկեղեցին, աղբյուր-հուշարձանը եւ այլն: Սույն հոդվածում քննության են դրվում գյուղի Ս. Մինաս[2] եռանավ բազիլիկ եկեղեցու (նկ. 1-2) եւ շրջակա գերեզմանոցի վիմագրերը, որոնք ուսումնասիրողների կողմից ցարդ պատշաճ ուշադրության չեն արժանացել:

1646 թ. կառուցված Ս. Մինաս եկեղեցու վերաբերյալ մատենագրական վկայությունները սուղ են: Երվանդ Լալայանի հաղորդմամբ. *«Գիւղի արեւելեան կողմում, մի փոքրիկ տափարակի վրայ գտնւում է Ս. Մինաս անունով եկեղեցին, փոքրիկ գմբէթով. շինուած է սրբատաշ քարերով, ձեղունը կամարակապ է եւ հանգչում չորս սիւների վրա»*[3]*:* ***Եկեղեցու կառուցման ժամանակի***

---

[1] Վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանն այսպես է կոչում Տաթեւի վանքից հարավ՝ ձորի հակառակ կողմում առկա ավերակ եկեղեցու եւ խաչքարի գտնվելու վայրը (ԴՀՎ, պրակ II, Գորիսի, Սիսիանի եւ Ղափանի շրջաններ, կազմեց՝ **Ս. Գ. Բարխուդարյան,** Երեւան, 1960, էջ 33): Աղբյուրներում այն հիշատակվում է նաեւ Տամալեկ, Տամալեք անվանաձեւերով, որը Թ.-Ժ. դդ. պատկանել է Տաթեւի վանքին (ՀՀՇՏԲ, հտ. Ե., Երեւան, 2001, էջ 23):

[2] Տաթեւի շրջակա բնակավայրերում (Խոզնավար, Հարժիս, Տաթեւ, Տանձատափ եւ այլն)՝ ԺԷ.-ԺԸ. դդ. կառուցված մի շարք եկեղեցիներ կրում են Ս. Մինասի անունը. մի երեւույթ, որը հատուկ լուսաբանման կարիք ունի:

[3] **Ե. Լալայեան,** Սիսիան. նիւթեր ապագայ ուսումնասիրութեան համար, ԱՀ, գիրք Գ., Թիֆլիս, 1898, էջ 145:

եւ նախաձեռնողի մասին տեղեկությունները քաղում ենք հուշարձանի հարավային պատին՝ դռան բարավորի կամարին եւ պատուհանի աջակողմում առկա նույնօրինակ արձանագրություններից: Այդ վիմագրերից մեկին առաջինն անդրադարձել է Ե. Լալայանը, ապա դրանք տեղ են գտել վիմագրագետ Սեդրակ Բարխուդարյանի կազմած «Դիվան հայ վիմագրության» երկրորդ պրակում: Ներկա հրատարակությամբ վիմագրերի վերծանություններին կցում ենք նորովի արված գրչանկար եւ լուսանկար, ապա՝ ծանոթագրություն:

1. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻ. *հարավային մուտքի կամարին, արտաքուստ, միատող.*



ՏԱԹԵՒԱՑԻ ՆԵՐՍԷՍ Վ⌊Ա⌋ՐԴ⌊Ա⌋Պ⌊Ե⌋Տ, ՇԻՆՕՂ ՍԲ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ, ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ ԱԾ, ԹՎԻՆ ՌՂԵ. (1646)[4]*:*

2. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻ. *հարավային պատին, լուսամուտի աջակողմում, արտաքուստ, միատող.*



ՏԱԹԵՒԱՑԻՒԵՐ ՍԷՍՎԱՐԴԱՊԵՏ ՇԻՆՈՂՍԲԵ ԵԿԵՂԵՑՈՅՍՅԻՇ ԵՑԷՔԻՔՍ:· ԹՎԻՆ ՌՂԵ

ՏԱԹԵՒԱՑԻ ՆԵՐՍԷՍ ՎԱՐԴԱՊԵՏ, ՇԻՆՈՂ ՍԲ ԵԿԵՂԵՑՈՅՍ, ՅԻՇԵՑԷՔ Ի ՔՍ, ԹՎԻՆ ՌՂԵ. (1646)[5]*:*

---

4 **Ե. Լալայեան,** նշվ. աշխ., էջ 145, ԴՀՎ, պրակ II, էջ 34, արձ. 66. **Ս. Պողոսյան,** Տաթեւի համառոտ պատմություն, Երեւան, 2011, էջ 32:

5 ԴՀՎ, պրակ II, էջ 34, արձ. 66:

ՄՄ լուսանկարների ֆոնդի Հ՝ 170, 1659 թվակիր գրչագրի հիշատակարանում Յոհան գրիչը տեղեկություններ է հաղորդում նաեւ Տաթեւ գյուղի եկեղեցին կառուցող հանգուցյալ զույգ վարդապետների մասին՝ ընթերցողներից խնդրելով նրանց հիշել եւ ողորմի ասել. *«...միով ողորմեացին եւ լիաբերան ձայնիւ յիշեցէք, զհոգինն հանգուցեալ առ Քրիստոս սրբազան վարդապետացն մերոց՝ Ներսիսի եւ Պետրոսի, որ բազում երկամբք եւ պէսպէս նեղութեամբ շինեցին եւ յօրինեալ կառուցին զշքեղազարդ եկեղեցին Տաթեւու բնիկ գեղջն իւրեանց եւ ինքեանք ի տես երիտասարդութեան վախճանեալք առ Տէր գնացին, անասելի կոծով եւ ողորմելի տեսական, որբս եւ անտերունչս զմեզ թողլով յետ ինքեանց մնացեալս»*[6]*:* ***Հիշատակարանի շարունակությունը նաեւ պարզում է, որ նշյալ վարդապետներից հետո Տաթեւի վանքի ու անապատի առաջնորդի եւ վերակացուի պաշտոնն ստանձնել է «քաջ բաբունի» տեր Արիստակես վարդապետը, որի պաշտոնավարումը գրիչը որակում է իբրեւ*** *«...ի մխիթարութիւն անձին եւ ի սփոփանս վշտացելոց սրտից...»*[7]*:* ***Ի դեպ, Զաքարիա Ագուլեցու հաղորդմամբ՝ Արիստակես վարդապետը վախճանվել է 1669 թ. դեկտեմբերին եւ հանգչում է Տաթեւի Մեծ անապատի Ս. Աստվածածին եկեղեցու գավթում***[8]***:*** ***Զափածո տապանագրում մահվան թվականը 1670-ն է, ուր նա բնութագրվում է իբրեւ մենաստանի առաջնորդ ու եկեղեցին կառուցող:***

Վերոնշյալ վարդապետներից Պետրոսի մասին հավելյալ տեղեկություն մեզ հայտնի չէ, մինչդեռ վիմագրերում երկիցս վկայված Ներսես Տաթեւացին, որը հիշատակված է իբրեւ «շինող» եկեղեցու, թաղված է Տաթեւի վանքում, ըստ տեղագիրների՝ գավթի երկրորդ սյան մոտ: Գավիթ-սրահը, ինչպես եւ՝ հին գավթի տեղում ԺԹ. դարավերջին կառուցված եռահարկ զանգակատունը, ցավոք, ավերվել են Սյունիքի՝ 1931 թ. երկրաշարժից, իսկ տապանաքարը ներկայում տեղում չէ: Բարեբախտաբար, Սարգիս Ջալալյանցի, Ղեւոնդ Ալիշանի, ապա նաեւ՝ Ե. Լալայանի համապատասխան աշխատություններում տեղ է գտել նաեւ Ներսես

---

[6] Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ, հտ. Գ., կազմեց՝ **Վ. Հակոբյան,** Երեւան, 1984, էջ 887:

[7] Անդ, էջ 888:

[8] Օրագրության մեջ Զաքարիա Ագուլեցին նկարագրում է «Ագուլաց առաջնորդ» Պետրոս վարդապետի հետ կատարած իր ուխտագնացությունը Հալիձորի, Տաթեւի եւ Շնհերի (Շինուհայր) անապատներ: Տաթեւի անապատի առնչությամբ նա վկայում է հետեւյալը. «Սորայ հայրն է Արիստակէս վարդապետն: Սորայ ունէր Հ. (70) կրօնաւոր մարդ: Այս անապատիս եկեղեցին դէռ եւս կիսակատար էր: Քանզի առաջ ուրիշ տէղ ին բնակեալ... այս Ը. (8) տարի այ, որ եկել ան այս տէղս: Շատ աշխատանք արաւ այս Արիստակէս վարդապետն այս տէղիս...» («Զաքարիա Ագուլեցու Որագրությունը», Յերեվան, 1938, էջ 75-76, 87):

վարդապետի չափածո տապանագիրը, որոնցից եւ օգտվել է Ս. Բարխուդարյանը.

Ի յայս տապան քնարանի,
կայ հանգուցեալ նշխար մեծի
Ներսեսի բաբունեաց պետի
Եւ եպիսկոպոսի Սիւնեաց նահանգի.
Գոլով տեղեաւ Տաթեւացի
Եւ եկեղեցւոյ շինողի,
Եղեւ փոխեալ ի կենաց աստի,
ՌՃ-երրորդ (1651) թուի, յիշեցէք[9]*:*

Տապանագրից դատելով՝ Ներսեսը ոչ միայն տեղի շինարար վարդապետներից է, այլեւ ժամանակի ուսյալ ու բազմիմաց անձանցից մեկը, ինչի մասին է վկայում նրան բնութագրող «բաբունեաց պետ» (ուսուցչապետ) արտահայտությունը: Այն, որ դեռեւս զարգացած միջնադարից Տաթեւի վանքը հռչակված էր իր բարձրագույն դպրոց-մատենադարանով, հայտնի իրողություն է: Տեղի գիտակրթական կյանքն, ըստ էության, շարունակվել է նաեւ անվանի աստվածաբան-փիլիսոփաներ Հովհան Որոտնեցուց (1315-1386 թթ.) եւ Գրիգոր Տաթեւացուց (1346-1409 թթ.) հետո, որոնց արժանի հետնորդներից մեկն էլ, թերեւս, Ներսես Տաթեւացին է:

Հ. Ղեւոնդ Ալիշանի հաղորդմամբ՝ Սյունյաց եպիսկոպոսներից Ներսես Տաթեւացին «արար բազում ուղղութիւնս եւ բարեկարգութիւնս եկեղեցական եւ քաղաքական, եւ շինեաց արեւմտեան կողմի խուցսն եւ զերեսբացսն (պատշգամբ - Ա. Հ.), եւ զեկեղեցին ի գեղջ իւրում»[10]*: Կարծում ենք, որ մեզ հաջողվեց միեւնույն Ներսեսի անունը գտնել նաեւ ՄՄ Հ՝ 774՝ երեք տարբեր ձեռագրերից բաղկացած «Ժողովածոյ»-ի գրչության հիշատակարանում, որտեղ նա վկայված է իբրեւ նվիրակ Քյոթահիայի (Գօթահիա) եւ ձեռագրի ստացող. «Ի թվին ՌՃ. (1651) ամին Փիլիպպոս կաթողիկոսի հրամանաւ եկաւ Գօթահիա Տաթեւացի Ներսէս վարդապետն նըւիրակ եւ եդեա, որ առ Ասպուած փոխեալ էր Ասպուածատուր քահանայն, եւ տեսեալ զայս գիրքս, ցանկացաւ... եւ մեք այլ զնորա խնդիրքն ոչ դարձուցաք յետս, այլ գրեցաք մեծաւ ջանիւ վասն մեր հօրն իւաթերն եւ շնորհեցաք իւրենն»*[11]*:*

---

[9] **Սարգիս արք. Ջալալեանց,** Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ., Տփխիս, 1858, էջ 301. **Ղեւոնդ Ալիշան,** Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 237-238, ծնթ. 1. **Ե. Լալայեան,** նշվ. աշխ., էջ 143, ԴՀՎ, պրակ II, էջ 36, արձ. 75:

[10] **Հ. Ղեւոնդ Ալիշան,** Սիսական, էջ 236:

[11] ՄՑՀՁ, հ. Գ., կազմեց՝ **Օ. Եգանեան,** Երեւան, 2007, էջ 671. տե՛ս նաեւ Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ, հտ. Գ., էջ 429:

Այն, որ Ներսեսը Փիլիպոս Ա. Աղբակեցի (1632-1655 թթ.) կաթողիկոսի աշակերտներից էր կամ Մաղաքիա արք. Օրմանյանի բնորոշմամբ՝ «հետեւորդ վարդապետներէն»[12] *մեկը, պարզվում է նաեւ Անկյուրիայի (Գաղատիա) Կարմիր վանքի Հ՝ 77 «Հաւաքածոյ» գրչագրի մի չափածո հիշատակարանից, որը վերաբերում է Երուսաղեմի ժողովի մասնակիցներին: Ինչպես հիշատակարանում է նշված, ժողովի գլուխ կարգված էր «վերադիտող մեծի Իջման Միածնին» Փիլիպոս կաթողիկոսը, որի հետ եկած վարդապետները. «...էին ամենեքեան աշակերտք նորին, Դաւիթ եւ ի Բարսեղ Շաւշ քաղաքացիքն, եւ Ներսէս կոչեցեալն Տաթեւացին»*[13]*: Հիշատակարանում երկու թվական է նշված, նախ՝ 1654, ապա 1652, մինչդեռ Ներսես Տաթեւացին, ըստ տապանագրի՝ վախճանվել է 1651 թ.: Ժամանակային նման տարբերությունը, թերեւս, պետք է պայմանավորել տոմարական տարատեսակ հաշվարկների հետ կամ տապանագրի թվականը ժամանակին ճիշտ չեն ընդօրինակել:*

Ս. Մինաս եկեղեցու վիմագրերից մեկում վկայված է նաեւ Ներսես վարդապետի եղբայր տեր Գրիգորի անունը:

3. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻ. *Հարավային դռան աջակողմում, 3 տող.*



ՆԵՐՍԷՍ Վ[Ա]ՐԴԱՊԵՏԻ
/ ԵՂԲ[Ա]ՅՐ ՏՐ ԳՐԻԳՈՐ,
ՅԻ/ՇԵՑԷՔ Ի ՔՍ,
ՌՃԻԴ. (1675):

Վիմագրում հիշատակված Ներսես վարդապետն, ըստ ամենայնի, համանուն Տաթեւացին է: ՄՄ Հ՝ 7882 «Աւետարան»-ի 1676 թվակիր հիշատակարանում կարդում ենք վիմագրում վկայված միեւնույն Գրիգոր քահանայի անունը, որը ձեռագիրը կարդացողներից կամ ընդօրինակողներից խնդրում է աղոթքներում հիշել իրեն եւ իր հարազատներին: Ուշագրավն այն է, որ Գրիգոր քահանան անվանապես հիշատակում է իր ազգականներին ու ընտանիքի անդամներին. «...յիշեցէք զիս՝ Գրիգոր քահանայս եւ զծնօղսն իմ՝ Վարդանէսն եւ մայրն՝ Գաւհարն, հօրեղբայրքն՝ Ահարոն

[12] **Մաղաքիա արք. Օրմանեան,** Ազգապատում, հտ. Բ., Ս. Էջմիածին, 2001, սիւն 2857:

[13] **Բաբգէն աթոռակից կաթողիկոս,** Ցուցակ ձեռագրաց Անկիւրիոյ Կարմիր վանուց եւ շրջակայից, Անթիլիաս-Լիբանան, 1957, էջ 389. տե՛ս նաեւ Հայերեն ձեռագրերի ԺԷ. դարի հիշատակարաններ, հտ. Գ., էջ 523:

եւ Անդրիասն, ***եւ եղբայրքն իմ՝ Ներսէս վարդապետն, որ ի գեղոս մեր Տաթեւ յեկեղեցիս շինեաց եւ կեցեալ առաջնորդ ի վանս ըՍրաթէի մէկ ամ, հանգեաւ ի Քրիստոս ի թվին ՌՃԴ. (1655) ամին,*** *եւ զմիւս եղբարքն՝ Անդրիասն եւ Պետրոսն, եւ պապերն մեր՝ Ղալամն, Յովհանէսն եւ տէր Ովանէսն, եւ որդիքն իմ՝ Յոհաննէսն, Պաղտասարն եւ Կիւրեղն, եւ կենակիցն իմ՝ Մարինոսն, եւ դստերքն իմ՝ Շահումն, Լէլին եւ Մարիամ, եւ եղբօրորդին՝ Երեմիայն, աղաչեմ յիշել...»*[14] *(ընդգծումը մերն է - Ա. Հ.):* ***Հիշատակարանն աղբյուրագիտական տեղեկագիր է, որտեղ պարզորոշ տրված է Ներսես վարդապետի ազգականների անվանացանկը, ինչի հիմամբ հնարավորություն է ստեղծվում կազմել նաեւ այս ընտանիքի տոհմածառը: Տարակույս է հարուցում Ներսեսի մահվան տարեթիվը. ինչպես տեսնում ենք աղբյուրներում այդ թվականը խիստ անկայուն է, ըստ այդմ՝ նախընտրում ենք որեւէ մեկնաբանություն չանել:***

Դատելով վիմագիր եւ մատենագիր սակավ, բայց արժեքավոր վավերագրերից՝ Տաթեւի Ս. Մինաս եկեղեցին կառուցվել է ժամանակի բավական ազդեցիկ հոգեւոր այրերից մեկի՝ Ներսես վարդապետի անմիջական նախաձեռնությամբ: Աղբյուրներից դատելով՝ նա մի որոշ ժամանակ ստանձնել է նաեւ Տաթեւի վանքի առաջնորդի պաշտոնը:

Ս. Մինաս եկեղեցու տանիքը նորոգվել է 1881 թ., ինչի առնչությամբ արձանագրություն է կազմվել:

4. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻ. *հարավային մուտքի բարավորին, 4 տող.*



ՈՂ[Ո]ՐՄ[ՈՒԹԵԱՄԲՆ] Ա՛Յ, Ն[Ո]ՐՈ/ԳԵՑ[Ա]Ի ՏԱՆԻՔ
ԵԿԵՂԵՑ[ԻՈՑ]Ս / ԱՐԴԵԱՄԲ ԵՒ ՁԱ[ԽԻԻ]Ք Յ[Ո]ՎԱՆԷՍ
Յ[Ո]ՎՍԷՓԵ[ԱՆ], / Տ[Ա]ԹԵՒԱ[Յ]Ի Ա[ՌԱ]ՔԷԼ[Ո]Յ, / Ի 1881 ԱՄԻ,
Ի Տ՛Ր Յ[ԻՍՈՒՍ] Ք[ՐԻՍՏՈՍ]:

[14] Ցուցակ հայերէն ձեռագրաց Նոր-Բայազէտի, կազմեց՝ **Հր. Աճառեան,** Վիեննա, 1924, էջ 4:

Վիմագրի համաձայն՝ նորոգումն իրագործվել է Հովհաննես Հովսեփյանի եւ ծագումով տաթեւացի Առաքելի նախաձեռնությամբ ու միջոցներով: Լեոն (Առաքել Բաբախանյան) 1888 թ. Տաթեւի վանք կատարած ուղեւորության ընթացքում եղել է նաեւ Ս. Մինաս եկեղեցում: Իր տպավորությունների նոթերում նա նշում է, որ գյուղի եկեղեցին. «...բավական սիրուն եւ հին շինություն է, որի կտուրը վերջերումս է նորոգվել»[15]: Նրա վրա մեծ ազդեցություն է թողել հատկապես եկեղեցու ներսում՝ հյուսիսային պատի խոռոչից բխող աղբյուրը, որը թափվելով ավազանի մեջ՝ ստորգետյա ուղիով հոսում է դեպի ցած[16]:

Ս. Մինաս եկեղեցին ունի երկու մուտք՝ արեւմուտքից եւ հարավից[17]: Դռները փայտից են՝ պատրաստված ԺԹ. դարավերջին: Հարավային դռան վրա առկա է նաեւ հիշատակագրություն:

5. Ս. ՄԻՆԱՍ ԵԿԵՂԵՑԻ. *Հարավային դռան վրա, 6 տող.*



ՇԻՆԵՑԱԻ ՏՈՒՌ/ԸՍ
ՍԲ ՄԻՆ[ԱՍ] ԵԿԵՂԵ/ՑՈՆ,
Ի Յ[Ի]ՇԱՏԱԿ Վ/ԱՐՊԵՏ
ՍԻՄԷՕՆ / ՄԿ[ՐՏ]ՉԵԱՆ
ԹՕԹ[Ո]Ի/ՆՑ, 1892 ԱՄ[Ի]:

Թոթունցը Տաթեւի նշանավոր ազգատոհմերից է: Ծնունդով տաթեւացի, գյուղագիր Սեդրակ Պողոսյանն իր ուսումնասիրության մեջ հատուկ բաժին է հատկացրել Տաթեւի ավելի քան 90 ազգությունների ու նրանց տոհմածառերի քննությանը[18]: Ըստ Թոթունց ազգի տոհմածառի՝

[15] **Լեո,** ԵԺ, հտ. Ը., Երեւան, 1985, էջ 75:

[16] Անդ:

[17] Առանձնապես աչքի է ընկնում եկեղեցու արեւմտյան մուտքի քանդակային ճոխ հարդարանքը, երբ դուռն ընդգրկված է խորանաձեւ նրբարվեստ զարդաքանդակների մեջ (նկ. 3): Արվեստի տեսանկյունից ուշագրավ են նաեւ արեւելյան պատի լուսամուտների հարդարատարր պատկերաքանդակները (նկ. 4): Կենտրոնի խաչաձեւ զույգ լուսամուտները երիզող հարթ գալարազարդի վրա Քրիստոսի կամ եկեղեցին կառուցող Ներսես վարդապետի հասակով մեկ կանգնած պատկերաքանդակն է, որի ձախ ձեռքին Սուրբ Գիրքն է, իսկ աջով պարզել է խաչը: Գալարազարդի վերնամասում բացվում է շրջանաձեւ մեկ այլ լուսամուտ, որի վրա, թերեւս, ձին հեծած Ս. Մինասի պատկերաքանդակն է (նա այս կերպ է պատկերված նաեւ Նորագավիթի Ս. Գեւորգ եկեղեցու որմնանկարներից մեկում): Միեւնույն պատի աջ եւ ձախ կողմերից բացվող խաչաձեւ փոքր լուսամուտները եւս պսակված են դիմաքանդակներով:

[18] **Ս. Պողոսյան,** Տաթեւի համառոտ պատմություն, էջ 119-162:

Նկ. 1 Տաթև գյուղի Ս. Մինաս եկեղեցին հարավ-արեւելքից, 1646 թ.

Նկ. 2 Ս. Մինաս եկեղեցու ներսույթը

Նկ. 3 Ս. Մինաս եկեղեցու արեւմտյան մուտքը

Նկ. 4 Ս. Մինաս եկեղեցու արեւելյան պատի
կրկնախաչ լուսամուտը եւ պատկերաքանդակները

Արձանագրություն 1

Արձանագրություն 2



Արձանագրություն 3

Արձանագրություն 4

Արձանագրություն 5

Արձանագրություն 6

Արձանագրություն 7

Արձանագրություն 8

Արձանագրություն 9

Արձանագրություն 10



Արձանագրություն 11

Արձանագրություն 12

Արձանագրություն 13

Արձանագրություն 14

Արձանագրություն 15

Արձանագրություն 16

Արձանագրություն 17



Արձանագրություն 18

առաջին սերունդներն են Մկրտիչն ու Մանուչարը, որոնցից առաջինի չորս զավակներից մեկն էլ Սիմոնն է[19]*, թերեւս, հիշատակագրության մեջ վկայված միեւնույն վարպետ Սիմեոն Մկրտչյանը:*

Ս. Մինաս եկեղեցու հարավարեւելյան կողմում տարածվում է ԺԷ.-ԺԹ. դդ. գերեզմանոցը՝ օրորոցաձեւ եւ հարթ ուղղանկյունաձեւ տապանաքարերով, որոնց ընդհանուր թիվը երեք տասնյակից ավելի է: Ե. Լալայանը նշում է, որ եկեղեցին պարսպապատ է, իսկ. «...գաւթում գտնւում են բաւական թուով գերեզմաններ, որոնց մէջ նշանաւոր են Օրբելեաններինը»[20]*: Պարսպապատը ներկայումս չի պահպանվել, իսկ շիրմաքարերի մի մասը, ցավոք, տեղահանված ու կողաշրջված է, ինչն էլ խոչընդոտում է գրերի լիակատար ընթերցմանը: Ստորեւ գիտական շրջանառության մեջ է դրվում ցարդ անտիպ 13 տապանագիր՝ ժամանակագրական կարգով.*

6. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *ուղղանկյունաձեւ, վրան՝ խաչով պսակված հովվապետական գավազան, 3 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԸԼԱՄԱ/ՆՑ
ՏՐ ԳՐԻԳՈՐ[Ի], ՈՐ ԱՌ ԱԾ/
ՓՈԽԵՑԱԻ, ԹՎ[ԻՆ]
ՌՃԽԲ. (1693):

Ղըլամանց-ը նույն Ղալամանց-Ղալամեանցն է, որը Տաթեւի նշանավոր ազգատոհմերից է եւ հիշատակված է նաեւ նույն գերեզմանոցի մեկ այլ տապանագրում (արձ. 10):

7. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *ուղղանկյունաձեւ, 3 տող.*



[ԱՅՍ Է Տ]ԱՊԱՆ ՔՆԱՐԱՆ ԱՌՆ ՈՐԴԻ ՄԻ
...ԴՍԻ ԳՈԼ ՏԵ[ՂԵ]ԱԻ ՏԱԹԵԻԱՑԻ
ԵԻ ՀԱՆԳԻՍՏ ԳՈՒԼՆԱԶԱՐԻ, ԹՎ[ԻՆ] ՌՃԿԸ.-Ի (1719):

---

[19] Անդ, էջ 137:

[20] **Ե. Լալայեան,** նշվ. աշխ., էջ 146:

Տապանագրում, ըստ էության, երկու ննջեցյալի անուն է հիշատակված՝ Գուլնազարի եւ ծագումով տաթեւացի ոմն մեկի, որի անունն անհասկանալի է մնում տապանաքարի ձախ անկյան կոտրվածքի պատճառով:

8. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *ուղղանկյունաձեւ, 4 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՐԻՍՏԱԿԻՍԻ ՈՐԴԻ /
ՈՒՍՏԱԴՄ ՊՈՂՈՍԻ ՁԵ ՕՍՄԱՆԼ/ՈՒՆ
ԳԱԼԸՆ ՍԸՊ[ԱՆ]ԵՑԻՆ ՂԸԶԻԼՊ/ԱՇ
Ղ[Ո]ՇՈՒՆ, ՈՐ ԻՐ ԵԿ ԹՎ[ԻՆ]
ՌՃՀԱ. (1722):

Բավական ուշագրավ այս տապանագիրը ժամանակի ռազմաքաղաքական անցքերի յուրօրինակ վավերագիր է՝ համեմված հայատառ պարսկաթուրքական տերմիններով[21]: Ննջեցյալն Արիստակեսի որդի ուստադմ (պարս.՝ իւսթա, օսթադ - ուսուցիչ, վարպետ[22] (թերեւս՝ բաբունապետ), թուրք.՝ ուսթատ - վարժապետ[23]) Պողոսն է, ով սպանվել է ԺԸ. դարի 20-ական թթ.՝ տեղական ավատատերերի ու խանների, ինչպես նաեւ օսման ու քոչվոր ցեղախմբերի դեմ՝ Դավիթ-Բեկի գլխավորած Սյունիքի ազատագրական շարժման ժամանակ՝ ղզլբաշ զորքերի կողմից:

Մխիթարյան վանական Ղուկաս Սեբաստացու «Ընտիր պատմութիւն Դաւիթ բէգին» աշխատությունը շարժման մասնակիցների հուշերի հիմամբ նկարագրում է Սյունիքում՝ 1722-1728 թթ. ծավալված ազատագրական պայքարի ողջ ընթացքը[24]: 1722 թ. վրաց Վախթանգ թա-

---

[21] Օտար բառերի մեկնաբանությունների համար շնորհակալություն ենք հայտնում ՄՄ գիտաշխատողներ Օքսանա Կարապետյանին եւ Հայկազ Գեւորգյանին:

[22] Բառարան պարսկերէն ըստ կարգի հայկական այբուբենից, ի Գէորգեայ դպրէ Տէր-Յովհաննէսեան Պալատցոյ, աշխատութեամբ եւ ուղղագրելով եւ համառօտ քերականութեամբ ի Յակոբայ Տիւզեան, Կ. Պոլիս, 1826, էջ 155:

[23] Երեքլեզուեան բառագիրք տաճկերէն-հայերէն-գաղղիերէն՝ հանդերձ համառօտ քերականութեամբ օսմանեան բարբառոյ, ի Վիեննա, 1883, էջ 718:

[24] **Ղուկաս Սեբաստացի,** Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին, եւ պատերազմաց հայոցն Խափանու, որք եղեն ընդդէմ թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի Տեառն 1722, եւ Հայոց 1171, հրատարակութեամբ ի լոյս ընծայեաց հանդերձ յաւելուածովք Աբգար Ստ. Գուլամիրեանց, ի Վաղարշապատ, 1871:

գավորի հրամանով Դավիթ-Բեկն իր փոքրաթիվ զորքով ժամանել է Ղափան (իմա՝ Կապան) ու ստանձնել հայերի պաշտպանության գործը: Հմուտ զորավարն ունեցել է և՛ համախոհներ, և՛ հակառակորդներ: Պատմությունից տեղեկանում ենք, որ Տաթեւի Մելիք-Բաղիրն ու իր որդիները մահմեդականություն են ընդունել, ինչը նոր դիմադրության առիթ է ստեղծել: Դավիթ-Բեկն ընկճելով Մելիք-Բաղիրին՝ վերջինիս գլխատվելուց հետո մի որոշ ժամանակ հաստատվել է Տաթեւում[25]*:*

Դառնալով տապանագրի «բառաֆոնդին»՝ մասնավորեցնենք, որ երկրորդ տողի ՉԵ-ն թեեւ պարսկերենից թարգմանաբար նշանակում է ինչ, սակայն, կարող էր գործածվել նաեւ որ ստորադասական շաղկապի նշանակությամբ, այսինքն՝ պետք է ընկալել որ օսմանցիները (օսմանլու) եկան իմաստով:

Ղզլբաշներն (տապանագրում՝ ղըզիլպաշ) այն պարսիկներն էին, ովքեր կրում էին կարմիր գծերով գլխարկներ (այստեղից՝ ղըզըլբաշ-կարմրագլուխ)[26]*: Մահմեդականները պարսիկներին եւ, ընդհանրապես, շիաներին կարմրագլուխ, այսինքն՝ ղզլբաշ էին անվանում*[27]*: Ինչ վերաբերում է ղոշուն (ղոշում) բառին, ապա այն հաճախադեպ է հատկապես Ղարաբաղի, Մեղրիի, Մուշի, Վանի բարբառներում եւ նշանակում է արշավող բանակ, զորք*[28]*: Ակներեւ է, որ օսմանցիների բանակի պարսիկ-ղզլբաշները կարող էին ընութագրվել իբրեւ ղոշուններ, այսինքն՝ պարսիկ կարմրագլուխների զորքեր: Ստացվում է, որ Պողոս բաբունապետը սպանվել է Դավիթ-Բեկի գլխավորած Սյունիքի ազատագրական պայքարի սկզբնական փուլում՝ օսմանցիների բանակի, հավանաբար, Տաթեւի շրջան ներխուժելու ժամանակ, պարսիկ-ղզլբաշների կողմից:*

9. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *ուղղանկյուն օրորոցաձեւ, հարավային նիստին, 3 տող.*



[25] ՀԺՊ, հտ. Դ., Հայ ժողովուրդը ֆեոդալիզմի վայրէջքի ժամանակաշրջանում XIV-XVIII դդ., Երեւան, 1972, էջ 161, 165-166:

[26] Հայոց լեզվի բարբառային բառարան, հտ. Գ., Երեւան, 2004, էջ 351:

[27] **Է. Աղայան,** Արդի հայերենի բացատրական բառարան, հտ. Ա., Երեւան, 1976, էջ 709:

[28] Հայոց լեզվի բարբառային բառարան, հտ. Գ., էջ 356:

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԳՐԻԳՈՐ ՈՐԴԻ ԾԱՏ/ՈՒՐ
ԱՇԽԱՏԱՂՕՔ ՔՈՒՐ ԿՈՒԼՓԱՐԻՆ /
ԹՎ[ԻՆ] ՌՅԱ. (1852):

Ննջեցյալն, ըստ էության, Գրիգորի որդի Ծատուրի քույր եւ նույն Գրիգորի դուստր Կուլփարն է, որը Գյուլբահար, Գյուլբհար անձնանվան բարբառային արտահայտչաձեւն է:

10. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *ուղղանկյուն օրորոցաձեւ, հյուսիսային նիստին, 3 տող.*



1864 ԱՄԻ
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՂԱԼԱՄԵԱՆ/Ց
Մ[Ե]ՍՐՈ[Պ]ԻՆ Ե[Վ]
ՂԿՈՒԼԻՆ:

Տապանագրում երկու անուն է հիշատակված՝ Մեսրոպ եւ մեզ անհայտ՝ Ղկուլ:

11. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *ուղղանկյուն օրորոցաձեւ, կողաշրջված, 3 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՀԻՐԱՆԱՑ
ՈՒՀԱՆԻ ՈՐԴԻ ՏԻՐԱՑՈՒ
ՍԱՐԳՍԻՆ, 1867 ԱՄԻ †:

Ս. Պողոսյանը հիշատակում է Շիրանաց[29] *ազգատոհմը, մինչդեռ տապանագրում ընթեռնելի է Հիրանաց:*

12. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *հարթ ուղղանկյունաձեւ, 3 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՍԼԼԵՐ[Ա]ՆՑ ԽԱՉԱ... ՈՐԴԻ ՈՒՍՏԱ ԳՐԻԳՈՐԻՆ,
1868 ԱՄԻ:

Ննջեցյալ ուստա Գրիգորի հայրանունը, թերեւս, Խաչա կամ Խաչատուր պետք է կարդալ, որը սերում է Սլերանց ազգատոհմից:

---

[29] **Ս. Պողոսյան,** նշվ. աշխ., էջ 120:

13. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *ուղղանկյուն օրորոցաձեւ, հարավային նիստին, 3 տող.*



1871-ԻՆ
ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ԱՎԶՈՒ/ՈՒՑ
ԽԱՉՈՒ ՈՐԴԻ ՂՈՒԿԱՍԻՆ:

Տաթեւի ազգութիւնների՝ Ս. Պողոսյանի կազմած ցուցակում տեղ է գտել նաեւ Ավչունց տոհմանունը[30]*:*

14. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *ուղղանկյուն օրորոցաձեւ, հյուսիսային նիստին, 4 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆԸ
ԱՂԱՋԱՆԵԱ[Ն]Ց
ՄԱՆ/ԿԱՍԱՐԻ
ՈՐԴԻ ՈՒ/ՍԴԻ ՅԱՐՈՒԹ[ԻՒՆ],
1886:

Ուսդի-ն, թերեւս, նույն ուստան է, այսինքն՝ վարպետը, վարժապետը:

15. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *քառանկյուն, պատվանդանի նման, վերջնամասը՝ եղծված, 8 տող.*



ԱՅՍ Է ՏԱՊԱՆ /
ԱՐԲԷԿԱՆՑ ՅԱ/ԿՈԲԻ
ՈՐԴԻ ՅԱՐ/ՈՒԹՈՒՆԻ,
1896 ԱՄԻ, / ԻԻՐ ՈՐԴԻ
ԱԷԱՆԻ /
1886 ԱՄԻ, ՅԱՄՈ/ՍԻ ՈՐԴԻ
...Ր... /
18...

[30] Անդ, էջ 119:

Ըստ ամենայնի՝ տապանագրում հիշատակված ննջեցյալները ծագումով Արբեկանց ազգատոհմից են: Նրանցից մեկը Հակոբի որդի Հարությունն է՝ վախճանված 1896 թ., մյուսը՝ վերջինիս որդի Այեանը (անունը՝ թեական)՝ վախճանված 1886 թ., իսկ երրորդի անունն ու մահվան թվականը եղծված են, միայն հստակ է, որ Ամոսի որդին է:

16. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *ուղղանկյուն օրորոցաձեւ, հյուսիսային նիստին, 3 տող.*



[ԱՅ]Ս Է ՏԱՊԱՆ ՊՕԶ/ՈՆՑ
ՅԱՐՈՒԹ[ԻՒ]ՆԻ ՈՐԴ/Ի
ՄԱՐՏՈՐՈՍԻՆ, 1889 ԱՄԻ:

17. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *ուղղանկյուն օրորոցաձեւ, հարավային նիստին, 3 տող.*



Ա[Յ]Ս Է Տ[Ա]Պ[Ա]Ն
ՄԱՔՈՒ
ՅԵՐԷ/ՄԻ ԳՈՂԱԳՈՒՑ
ՆԱՂԷՆ, /
1898 ԱՄԻ:

18. ՏԱՊԱՆԱՔԱՐ. *ուղղանկյուն օրորոցաձեւ, հարավային նիստին, 2 տող.*

ԱՅՍ Է ՏԱՊԱՆ ՄԱՆԱՍԻ ՈՐԴԻ
Կ...ԹԻՆԻՆ ...

Երկրորդ տողը հողմահարված է, թերեւս պետք է կարդալ Յարութիւն:

Արձանագրությունների ընդհանուր քննությամբ պարզվում են Տաթեւի հայտնի ու անհայտ մի շարք ազգատոհմերի անունները, ինչպիսիք են՝ Թոթունց, Ղալամանց, Հիրանաց, Սլերանց, Ավչունց, Աղաջանեանց, Արբեկանց, Պոզոնց, որոնց շառավիղները մինչ օրս Տաթեւի բնակչության մասն են կազմում: Ուստադմ (վարժապետ) Պողոսի 1722 թվակիր ուշագրավ

տապանագիրն ինքնին ժամանակի պատմաքաղաքական անցքերի քարեղեն սակավ վկայագրերից է:

Տաթեւ գյուղի Ս. Մինաս եկեղեցին վերջին անգամ նորոգվել է 1995-1997 թթ. «Երկիր եւ մշակույթ» հասարակական կազմակերպության անմիջական վերահսկողությամբ ու միջոցներով[31], որի արդյունքում փոխվել են ծածկասալերը, մաքրվել որմերի ներքին ծեփը, բարեկարգվել շրջակայքը եւ այլն: Տարածքի կանոնակարգման ու բարեկեցիկ միջավայրի ապահովման ուղղությամբ հարկ է աշխատանքներ տանել նաեւ ընկած եւ կրկնակի օգտագործման ենթարկված տապանաքարերի վերադասավորման ուղղությամբ: Այս կերպ միայն հնարավոր կլինի ամբողջացնել ողջ տապանագրային նյութը: Քննության դրված 18 վիմագրից մեզ հայտնի տվյալներով նախկինում հրատարակվել է միայն երկուսը, իսկ մյուսներն առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ:

РЕЗЮМЕ

Трехнефная базилика Святого Минаса в селе Татев (Сюникская область Республики Армения) и ее эпиграфические надписи доселе не было должным образом исследованы. Из двух строительных надписей, расположенных на южной стене церкви, стало ясно, что она была построена в 1646 году по инициативе архимандрита Нерсеса Татеваци. Некоторые сведения о житие этого видного духовного деятеля Татева сохранились также в сочинениях летописцев. Скончался он в 1651 году и был похоронен в притворе монастыря Татев (надгробье не сохранилось). Значительная часть исследованных эпиграфических надписей церкви Святого Минаса представлена более десятком эпитафий на надгробных камнях, расположенных на церковном кладбище и датируемых XVII-XIX веками. Их изучение приобретает особую важность в связи с освещением вопросов родовых династий Татева. Упомянуты роды Тотунц, Каламанц, Гиранац, Слеранц, Авчунц, Агаджанянц, Арбеканц, Позонц, потомки которых до сих пор проживают в Татеве.

---

[31] Այս տեղեկությունը եւ նորոգումների հետ կապված որոշ լուսանկարներ մեզ է տրամադրել «Երկիր եւ մշակույթ» կազմակերպության անդամ, հնագետ Դավիթ Դավթյանը. հայտնում ենք մեր շնորհակալությունը:

SUMMARY

The three-nave basilica of St. Minas Church in Tatev village (Syunik province of the Republic of Armenia) and its epigraphs have not yet been closely studied by researchers. Two inscriptions about construction preserved on the southern wall of the Church reveal that it was built in 1646 upon the initiative of Archimandrite Nerses of Tatev. Certain information about this prominent spiritual figure of the Monastery of Tatev is also preserved in historical records. He died in 1651 and was buried in the narthex of the Monastery of Tatev (the gravestone is not preserved in situ). A considerable part of the epigraphs of St. Minas Church under examination present more than a dozen of epitaphs dated to the 17th – 19th centuries. Their study is especially important for making clear the family names of Tatev, such as Totounts, Ghalamants, Hiranats, Slerants, Avchounts, Aghajaneants, Arbekants, Pozonts, whose offspring still live in Tatev.